ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ. Թ. Ա. VII—I ԴԱՐԵՐԻ ԽԵՑԵՂԵՆԻ ԲՆՈՐՈՇ ՄԻ ՁԵՎ

Վերջին տարիներին Սովետական Հայաստանի մի շարք վայրերում (Արմավիր, Գառնի, Հացավան և այլն) սիստեմատիկ պեղումների շնորհիվ և պատահաբար հայտնաբերվել են մեծ քանակությամբ վաղ հայկական (աքեմենյան) և հելլենիստական շրջանի խեցեղեն իրեր, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում մ. թ. ա. VI—I դարերի նյութական մշակույթի կարևոր ճյուղերից մեկի՝ խեցեգործության ուսումնասիրության համար։

Սույն հոդվածում քննության է առնվում խեցեղեն անոթների ամենատարածված տեսակներից մեկը՝ թասերը, այսպես կոչված փիալաները, որոնք օգտագործվել են հեղուկ նյութեր խմելու համար, և, հավանաբար, եղել են այդ նպատակին ծառայող հիմնական անոթներից մեկը։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աքեմենյան և հելլենիստական շրջանի դամբարաններում, որպես կանոն, նրանք դրվում էին սափորների բերանին։ Թասերին բնորոշ է կիսագնդաձև ցածր իրան, ներճկված բարձր վիզ (վերին մաս), իրանի և վզի միացման շեշտված անցում, կլոր հատակ։ Մի քանիսը ներսից ունեն փոքր ելուստ։ Թասերն իրենց ընդհանրություններով հանդերձ իրարից տարբերվում են կավի որակով, մշակումով և հարդարանքով։ Նրանք, ըստ իրենց հարդարանքի, բաժանվում են երեք խմբի՝ միագույն, գունազարդ, ակոսավոր և ուռուցիկ զարդերով թասեր։

Առաջին խմբի մեջ մտնում են առանց անդորի, թխավուն, կարմրավուն և վարդագույն թասերը, ինչպես նաև վիզը դրսից ու ներսից կարմիր, դարչնագույն, կամ ներսից ամբողջությամբ, դրսից՝ միայն մասամբ անգորով պատած թասերը։ Դրանք հայտնի են դեռևս ուրարտական շրջանից (տախտ. I₃)։ Արգիշտիխինիլիում[1] (Նոր Արմավիր) գտնված կիսագնդաձև իրանով, ոչ բարձր ներճկված վզով, շեշտված անցումով թասը (մ. թ. ա. VIII դարի) դրսից ու ներսից պատած է մուգ-կարմիր ներկով և փայլեցված է։ Ընդհանրապես վերին մասը ներճկված, շեշտված անցումով, փոված ուրարտական թասերը՝ տարբերվում են փիալաներից միայն հարթ հատակով ու պսակից ներքև ցածր հաստ մասով։

Այս տեսակետից ուշադրության արժանի է Արմավիրում հայտնաբերված ուրարտական թասերի մի այլ տեսակ (տախտ. I₂)։ Դրանք նրբախեցի են, ուղղահայաց բարձր վերին մասով, հետևաբար անցումը իրանին սահուն է, երկու երեսից պատած են կարմիր ներկով և փայլեցրած (1967 թ. №№ 25, 39 և այլն)։ Ինչպես կտեսնենք հետագայում, վաղ հայկական և հելլենիստական թասերի մեջ մեծ թիվ են կազմում նաև ուղղահայաց կամ քիչ լայնացող վերին մասերով թասերը, որոնք ունեն համեմատաբար նուրբ, սահուն անցում։ Արմավիրում հայտնաբերված թասերից մի քանիսը որոշակիորեն նմանվում է Արգիշտիխինիլիի անոթին (տախտ. I₄)։ Դրանք ներսից ամբողջությամբ, դրսից միայն վերին մասում կարմիր և մուգ կարմիր անգորով պատած, հողի տակ մնալուց առաջացած (ուրարտական խեցեղենին բնորոշ) սև խալերով թասեր են (ՊՊԹ 2256/40, 2287/39, Արմավիր 1964 թ. № 56, 1966 թ. №№ 65, 86 և այլն)։ Այս թասերը պատկանում են ամենահների խմբին և կարող են թվագրվել մ. թ. ա. VI—V դարերով։ Իրենց արտաքին ձևերով ուրարտական թասերին շատ մոտ են նաև Գառնիում, պալատական շենքի առջևից հայտնաբերված թասերը (տախտ. I₅-₇)։ Այդ նրբախեցի թխավուն թասերը, որ ի հայտ են եկել 4—5,5 մետր խորությունից, վաղ հայկական տեղական խեցեղենի հետ, ունեն ներճկված ցածր վերին մաս, լավ փայլեցրած մակերես (1965 թ. №№ 43, 49, 117 և այլն)։

Վաղ հայկական շրջանին պատկանող, լավ թվագրվող թասեր հայտնի են Կարմիր-բլուրի քաղաքային մասից և Ջրառատից[4]։ Դրանք ու-

---

[1] Հ. Հ. Մարտիրոսյան, Раскопки Аргиштихинили, „Советская археология", № 4, 1967, նկ. 5։

[2] Հ. Օ. Մնացականյան, Գ. Հ. Տիրացյան, Новые данные о материальной культуре древней Армении, „Известия АН Арм. ССР" (обществ. науки), № 8, 1961 էջ 76 և հտ., տախտ. 4։

[3] Հ. Հ. Մարտիրոսյան, Город Тейшебаини, Ереван, 1961, էջ 144—145, նկ. 68։

[4] Հ. Օ. Մնացականյան, Գ. Հ. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 76 և հտ., տախտ. 4։



Տախտակ I

նեն թխավուն, բարձր, դեպի դուրս լայնացող վերին մաս և լավ փայլեցրած մակերես։ Մ. թ. ա. V—IV դարերով կարող են թվագրվել նաև Արին-բերդում գտնված (տախտ. II_3) թխավուն, լավ թրծած ու փայլեցրած, պսակից ներքև ներճկված ցածր մասով թասը (ՊՊԹ 2162/190, տրամ. 15 սմ, բարձր. 6—7 սմ), Կամո քաղաքում գտնված (տախտ. I_{18}) բաց դարչնագույն, անփայլ մակերեսով խոր թասը, որն ունի փոքրիկ հարթ հատակ (ՊՊԹ 2257/48. տրամ. 13 սմ, բարձր. 7,3 սմ), և Մարտունու շրջանի Վարդաձոր գյուղի մոտ գտնվող ուրարտական ամրոցից բերված թասի բեկորը։ Վերջինս թխավուն է, բարձր, լայնացող վերին մասով և լավ մշակված մակերեսով։ Այն նմանվում է Կարմիր-բլուրի վերոհիշյալ թասին։

Մեր ձեռքի տակ եղած՝ Արմավիրում և Գառնիում հայտնաբերված մի շարք թասեր ևս հավանաբար կարելի է համարել մ. թ. ա. V—IV դարերի արտադրանք, քանի որ նրանք որոշակի նմանություն ունեն վերը թված խեցեղենի հետ (Գառնի 1965 թ. №№ 32, 63, 82, 95, 96, ՊՊԹ 2256/12, 31, 76 և այլն)։

Թասերի մի մեծ խումբ պատկանում է հելլենիստական շրջանին։ Դրանք տարբեր խորության, ուղիղ և պսակից ներքև ներճկված, առանց անգորի կամ էլ օխրայի, վարդագույն ու կարմրավուն անգորով անոթներ են (ՊՊԹ 2099/32, 39, 2256/2, 2287/7, 21, 42, 55, Գառնի 1964 թ. №№ 12, 22, 43, 59 և այլն, 1965 թ. №№ 5, 49, 63, 91 և այլն, 1967 թ., Արմավիր 1964 թ., № 32, 1967 թ. №№ 1, 14, 1968 թ.)։ Այս թասերի մեջ հաճախ ենք հանդիպում նաև ներսից անգոր քսած (Գառնի, Արմավիր, Հացավան, Արտաշատ) կամ վերին մասը դրսից ու ներսից, կամ մի կողմից լրիվ, մյուս կողմից

կիսով չափ անգորած թասեր (տախտ. I 11, 12, 14, 17, 19, 20)։

Հելլենիստական թասերի հարդարմանը, բացի հավասար քսված ու մշակված անգորից, բնորոշ է նաև բաց օխրայի, թխավուն, բաց կարմիր անհավասար և շերտերով քսված անգորը կամ նոր քսված անգորի տակից երևում է կավի գույնը (տախտ. IV 1, 6)։ Գունային էֆեկտներ ստեղծելու այս ձևերը, հանդես գալով վաղ հայկական ժամանակներում, լայն տարածում են ստանում հելլենիստական շրջանում, երբ խեցեղենը գունազարդելու ավանդույթը հասել էր իր ծաղկման ու զարգացման գագաթնակետին։ Սրանք հայտնաբերվել են Արմավիրի, Հացաշենի և Գառնիի հելլենիստական (մ. թ. ա. III—I դարերի) շերտերից և դամբարաններից[5]։ Վերջինս հատակին թմբիկ ունի, որն արված է մետաղյա թասերի օրինակով, հարմար բռնելու համար։

Երկրորդ խմբի մեջ մտնում են տարբեր գույներով ներկված երկրաչափական զարդերով թասերը։ Մյուսներից առանձնանում են կենտրոնական խաչաձև և անվաձև (ճառագայթաձև) պատկերներով անոթները, որոնք արված են ներսից իրանի վերին մասով անցնող շրջանագծի մեջ (տախտ. I 9, 21, 24)։ Հարդարման այս եղանակը առաջացել է նախորդ ձևերից, հելլենիստական շրջանում։ Վարպետը ամանին աշխույժ տեսք հաղորդելու համար, ամբողջությամբ ներկելու փոխարեն, ներսում բաց ֆոնի վրա կարմիր ներկով պատկերել է խաչաձև կամ անվաձև (ճառագայթաձև) զարդ, ստեղծելով երկու գույների համադրություն։ Արմավիրի գունազարդ խեցեղենի մեջ դա ամենատարածված զարդերից է և հետաքրքիր է, որ այդօրինակ բոլոր թասերը Արմավիրից են։

Այս ձևով են զարդարվել տարբեր խորության անոթները, փռված ափսեները, պնակները, երկկանթանի ջրամանները (կենտրոնական շրջանագծերը) և այլն, որոնցից մեծ քանակությամբ գտնվել են Արմավիրում[6], Արտաշատում, Գառնիում, Դվինում (ՊՊԹ 2287/7, 9, 34, 43, 47, 53, 2256/1 և այլն)։ Նման խաչաձև զարդերով փոքրիկ թասեր հայտ են եկել Դվինում, Գառնիում կարասային թաղման մեջ, Ալեքսանդր Մակեդոնացու արծաթյա դրամի հետ միասին, Զվարթնոցում և Արևշատում (Աղրաշ)։ Նույն եղանակով է հարդարված նաև Գառնիում կարասային թաղման մեջ բացված փոքր պուլիկը, որի մակերեսին, բաց ֆոնի վրա, կարմիր ներկով ուռուցիկ մասում արված գոտին հատվում է վզի գոտուց իջնող ժապավեններով։ Բաց դեղնավուն ֆոնի վրա կարմիր ներկով խաչաձև նախշ է պատկերված էջմիածնի թանգարանի հավաքածուի երկու սափորների և ծորակով անոթի հատակին (ՊՊԹ 766/123, 766/127)։

Ուշագրավ են ալիքաձև, զիգզագաձև, եռանկյունաձև նախշերով զարդարված նրբախեցի թասերը։ Սրանք մեծ մասամբ հայտնաբերվել են Գառնիում։ Նրանցից մեկի (թերի) վերին մասում ներսից, բաց ֆոնի վրա, արված է երեք եռանկյունի, որոնցից մեջտեղինը դարչնագույն է, կողքերինը՝ կարմիր։ Դրսից, ներճկված մասի հիմքով, բաց դարչնագույն ֆոնի վրա կարմիրով տարված է ալիքաձև զարդ (տախտ. III 7), այս թասը հայտնաբերվել է 1,80 մ խորությունից։ Երկգույն, իրար մեջ հագած երկու եռանկյուններով զարդարված թասի մի բեկոր էլ գտնվել է Արմավիրում 4F քառակուսուց, 75 սմ խորությունից (1969 թ. № 130)։ Թասերից մյուսի (թերի) վերին մասը ներսից զարդարված է բաց ֆոնի վրա արված՝ իրար մեջ հագած երեք դարչնագույն եռանկյուններով (տախտ. III 5)։ Ուրարտական թասերի նման ներճկված մասը ցածր է, մակերեսը լավ մշակված, փայլեցված է միայն վերին մասը, գտնվել է 3,5 մ խորությունից։ Երրորդ նմուշի վերին մասը (տախտ. III 6) ներսից զարդարված է չորս կարմիր ու շագանակագույն մեկընդմեջ արված իրար հաջորդող եռանկյուններով (պս. տր. 15 սմ, բարձ. 6,5 սմ)։ Ներճկված մասը նման է առաջինին, բայց անցումը համեմատաբար նուրբ է, գարձյալ փայլեցված է միայն վերին մասը։ Հայտնաբերվել է 3 մ խորությունից։ Չորրորդի պսակը դրսից պատած է կարմիրով, ներճկված մասի հիմքով անցնում է կարմիր գոտի, իսկ ներսից կարմիրով ու դարչնագույնով արված մեկընդմեջ եռանկյուններից փոքրի մեջը լցված է նույն գույների ուղղահայաց գծերով (տախտ. III 3)։ Գտնվել է 2,80 մ խորությունից։ Գառնիի թասերից երկուսի վերին մասը ներսից զարդարված է կարմիր և մուգ դարչնագույն

---

[5] Գ. Ա. Տիրացյան, Հացավանի ամրոցի 1962 թ. պեղումները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), № 12, 1962, էջ 105։ Ինչպես նաև Հացավանի հաջորդ տարիների պեղումները։ Հ. Օ. Մնացականյան, Գ. Ա. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 77, տախտ. 7, III (ձախից)։ Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում գտնված գունագարդ խեցեղենի մի քանի նմուշներ, «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1966, էջ 255—256, տախտ. II 3։

[6] Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении, „Историко-филологический журнал", № 3, 1965, տախտ. II 4։

[7] Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 225, տախտ. II 1—4։

զիգզագաձև գոտիներով (տախտ. III 1, 4, մեկի պս. տր. 14 սմ, բարձր. 7,5 սմ)։ Գտնվել են 3 մ խորությունից։

Նման երկգույն զարդերով խեցեղեն հանդիպում է վաղ հայկական և հատկապես հելլենիստական շրջանում։ Մեկընդմեջ գոտիներով են զարդարված Գեղադիրի տափաշիշը[8], Կարմիր-բլուրի կից անոթները և այլն, իսկ եռանկյունաձև նախշերով հարդարված են մ. թ. ա. V—IV դարերի վազաները[9] (ալաբաստրները)։ Արմավիրում, ուրարտական տան մեջ գտնված բարձր իրանով վաղ հայկական անոթի մակերեսին սևով արված է իրար մեջ հագած երեք եռանկյունի։

Գառնիում նույն (76, b) քառակուսում, որտեղից և գունազարդ թասերն են, 3—4 մ խորությունից հայտնաբերվել են ցանցաձև, եռանկյունաձև նախշերով մի շարք անոթների բեկորներ (Գառնի, 1965 թ., №№ 40, 50, 53, 64, 82, 95, 98 և այլն), այդ թվում նաև երկգույն եռանկյունիներով (ՊՊԹ 2288/52)։ Գառնիի թասերը աղերսվում են Վրաստանում, Ղուշչիից հայտնաբերված աքեմենյան շրջանի սափորներին[10] և Ադրբեջանից՝ Քաբալայի բարձր ոտքով սկահակի[11] հետ, որոնք զարդարված են այդօրինակ եռանկյունիներով։

Սակայն Գառնիի թասերն ամենից ավելի աղերսվում են Թելշեբաինիի միջնաբերդում հայտնաբերված ուրարտական երկարաճիտ կոշիկի ձև ունեցող անոթի և գունազարդ ասկոսիորոշ մոտիվների հետ, որը կապվում է միջերկրածովյան, փոքրասիական խեցեղենի հետ։ Վերջինիս իրանի ներքին կեսը պատած է մուգ կարմիր ներկով։ Վերին մասում կաթնավուն ֆոնի վրա դարչնագույնով և կարմիրով պատկերված են զանազան երկրաչափական զարդեր, այդ թվում և մեկընդմեջ իրար հաջորդող եռանկյունիներ, որոնք և՛ ներկերի գույնով, և՛ զարդերով ճշտությամբ կրկնված են Գառնիի թասերի վրա։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վաղ հայկական և հատկապես հելլենիստական գունազարդ խեցեղենը իր զարդամոտիվներով և հարդարումով նույնպես առընչվում է հունական, փոքրասիական խեցեղենի հետ, ինչպես նաև իր զուգահեռներն ունի Իրանում[13]։ Այս տեսակետից Գասերի վերոհիշյալ խմբին կարելի է միացնել նաև Գառնիում, նույն քառակուսուց (3,40 սմ խորությունից) հայտ եկած բեկորը, որի վերին մասում ներսից, կաթնավուն ֆոնի վրա սև ներկով արված աղեղնաձև իջնող զուգահեռ գծերից վեր, դարչնագույնով պատկերված է աստիճանաբար իջնող ալիքաձև զարդ (տախտ. IV 1)։

Այսպիսով, վերը բերված զուգահեռները թույլ են տալիս Գառնիի թասերից առաջինը, որը հայտնաբերվել է վերին շերտերից, և Արմավիրի հելլենիստական շերտից գտնված թասի բեկորը համարել մ. թ. ա. III—II, իսկ մյուսները՝ մ. թ. ա. V—IV դարերի արտադրանք։ Այդ գույները ու զարդերը լայնորեն տարածված են եղել նաև հելլենիստական շրջանում։ Իրար մեջ արված եռանկյունիներով և զիգզագներով են զարդարված էջմիածնի Հավաքածուի վերոհիշյալ անոթները։ Չնայած արխաիկ ձևերին, նրանք իրենց հարդարանքով շատ են հիշեցնում հելլենիստական շրջանի խեցեղենը։ Հելլենիստական շրջանում նորից վերակենդանանում են արխաիկ ձևերն ու զարդերը, հարստանալով նոր մոտիվներով, ստանում են նոր երանգավորում։ Մինչև վերջերս ենթադրվում էր, թե վաղ հայկական ու հելլենիստական շրջանի գունազարդ խեցեղենը իր նախշերով քիչ է կապվում ուրարտական գունազարդ խեցեղենի հետ։ Սակայն Գառնիի մ. թ. ա. V—IV դարերի թասերը վկայում են, որ ուրարտական գունազարդ խեցեղենի ավանդույթները ևս շարունակվել են հետագայում։

Այդ են հաստատում նաև Արմավիրի, Գառնիի, Վանի, Ալթին-թեփեի նորահայտ թասերի բեկորները։ Արմավիրի թասի (տախտակ III_e) վերին մասը ներսից մարմնագույն ֆոնի վրա կարմիր ներկով պատկերված են պսակից դեպի իրանն իջնող եռանկյունիներ։ Թասը լավ փայլեցված է։ Ալթին-թեփեի և Վանի թասերի մի մասի եռանկյունիները եզերված են մուգ մոխրագույնով և հենվում են վզին արված եռանկյունիների ծայրերին, իսկ մյուս մասի մեկընդմեջ եռանկյունիները լցված են այլ գույնով կամ ընդհատվում են քառաթև վարդյակով։ Վերոհիշյալ խեցեղենի եռանկյունաձև զարդերը նույնպես աղերսվում են ուրարտական

---

[8] Նույն տեղում, էջ 253 և հտ., տախտ. I_1։

[9] Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении, տախտ. I_{5-7}, II_2։

[10] Б. А. Куфтин, Археологические раскопки 1947 года в Цалкинском районе, Тбилиси, 1948, էջ 7 և հտ., տախտ. III։

[11] С М. Казиев, Из истории Кабалинского магала, „Вопросы истории Кавказской Албании", Баку, 1962, տախտ. X_2։

[12] Б. Б. Пиотровский, Город бога Тейшебы, „Советская археология", № 2, 1959, էջ 175—176, նկ. 4։ Նույնի Искусство Урарту, Л., 1962, տախտ. XXVIII։

[13] Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении; Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում գտնված գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ։

խեցեղենի՝ կարասների, երկկանթանի սափորների վրայի եռանկյունիների հետ[14]։

Եռանկյունաձև զարդերը հելլենիստական խեցեղենի ամենաբնորոշ ու տարածված զարդերից մեկն են։ Դրանք հանդիպում են նոր Արմավիրի ծորակավոր մեծ անոթի, Գառնիի գունազարդ կարասի, Արևշատի մի կանթանի սափորի[15], Արմավիրում գտնված հելլենիստական շրջանի ջրամանի, մեծ անոթի (1969 թ. № 127) և այլ անոթների վրա։ Մեր եռանկյունիները հիշեցնող գունավոր նախշերով են զարդարված նաև Խորեզմի[16] կանգյունյան ժամանակաշրջանի խեցեղեն անոթներն ու Ադրբեջանի կարասային թաղումներից[17] հայտնաբերված գունազարդ խեցեղենը։ Արմավիրի թասը, որը, ինչպես վերը տեսանք, եռանկյունաձև զարդերով աղերսվում է ուրարտական խեցեղենի հետ, իր մշակումով տարբերվում է նրանցից (3D քառ)։ Այն հայտնաբերվել է վաղ հելլենիստական շերտից խառնաձև զարդերով թասերի և այլ իրերի հետ միասին և թվագրվում է մ. թ. ա. IV դարի վերջով—III դարով։ Ալթին-Թեփեի գունազարդ խեցեղենը հայտնաբերվել է շինարարական երկրորդ շերտից սյունազարդ դահլիճից, որը Թ. Օզգյուչը համարում է մ. թ. ա. VII դարի II կեսի կառուցվածք[18], ուստի այնտեղից հայտնաբերված խեցեղենը թվագրվում է նույն ժամանակով[19]։ Վանի գունազարդ խեցեղենը, ըստ Օստենի, պատկանում է ավելի վաղ շրջանի (մինչ 714 թվականը), քանի որ Թոփրախ-կալեում գունազարդ խեցեղեն չի հայտնաբերվել[20]։ Մինչդեռ Մառի պեղումների ժամանակ Թոփրախ-կալեում հայտնաբերվել են նաև գունազարդ խեցեղենի բեկորներ, որոնք պահվում են պետական Էրմիտաժի արևելքի բաժնում (№№ 16020, 16588)։ Դրանք երկու փոքրիկ պուլիկների բեկորներ են՝ հարդարված կարմիր, բաց և սև գույներով, ծաղկաշղթայով և եռանկյունիներով։ Անոթները իրենց ձևերով ու զարդերով պատկանում են մ. թ. ա. V—IV դարերին և ձայնակցում են Կարմիր-բլուրի վերոհիշյալ կից անոթների, Արմավիրի և Գառնիի վաղ հայկական և հելլենիստական պուլիկների հետ։

Ալթին-Թեփեի մ. թ. ա. VII դարի II կեսով թվագրվող սյունազարդ դահլիճը Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով չի կարող ուրարտական մշակույթին վերաբերել, քանի որ այն մասամբ ծածկում է մ. թ. ա. VIII դարի II կեսի հիպոստիլ դահլիճով ուրարտական տաճարը։ Անկասկած սյունազարդ դահլիճը կառուցված է ավելի ուշ, աքեմենյան շրջանում, ինչպես Էրեբունիում։ Կ. Էմռեն, Ալթին-Թեփեի գունազարդ խեցեղենը համեմատելով Վանի գունազարդ խեցեղենի հետ, գտնում է, որ երկու կենտրոններում էլ նրանք նույնն են և հանդիսանում են մեկը մյուսի շարունակությունը, որ, ի տարբերություն Վանի խեցեղենի, ալիքաձև զարդերը Ալթին-Թեփեում բացակայում են և որ Ալթին-Թեփեի ու Վանի գունազարդ խեցեղենը իրենց մշակումով ու զարդամոտիվներով նույնն են, ինչ որ Գառնիի և Արմավիրի վաղ հայկական և հելլենիստական խեցեղենը։

Ինչ վերաբերում է անոթների ձևերին, ապա նրանք միանգամայն տարբերվում են ուրարտական միագույն խեցեղեն անոթներից և նույնպես բնորոշ են հետուրարտական շրջանին ու կարող են պատկանել աքեմենյան և վաղ հելլենիստական շրջանին։ Այս ամենը ևս վկայում է Ալթին-Թեփեի սյունազարդ դահլիճի հետուրարտական կառույց լինելու մասին։ Իրավամբ Օստենը Վանի գունազարդ խեցեղենը համեմատում է փռյուգիականի հետ, սակայն նրանք ոչ թե ժամանակակից են, այլ նրանց վաղ հայկական և հելլենիստական գունազարդ խեցեղենի վրա զգացվում է փռյուգիականի ազդեցությունը։

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև Կ. Էմռեի եզրակացություններից մեկին, ըստ որի «Ուրարտուի անկումից հետո ուրարտական խեցեղենը չօգտագործվեց այլ ժողովուրդների կող-

---

[14] Գ. Ա. Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1964, էջ 162, տախտ. II_1։ С. И. Ходжаш, Керамика Эребуни, „Сообщения Гос. музея изобразительных искусств им. А. С. Пушкина", IV, Москва, 1968, էջ 136, 140, տախտ. $II_{1,5-7}$; А. А. Мартиросян, Раскопки Аргиштихинили, նկ. 4, վերին երկուսը։

[15] Գ. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, էջ 108, նկ. 6։

[16] „Керамика Хорезма", М., 1959, նկ. 42_{1-3}։

[17] С. М. Казиев, Альбом кувшинных погребений, Баку, 1960, էջ 21, տախտ. XI_{1-4}։

[18] T. Özgüc. Altintepe Architectural Monuments and Wall Paintings, Ankara, 1966, էջ 12։

[19] K. Emre, The Urartian Pottery from Altintepe, „Belleten", Cilt XXXIII, Sayi 131, Ankara, 1969, էջ 291 և հտ., նկ. 20—22, տախտ. IV_{1-3}, V_{2-4}։

[20] H. H. Von der Osten, Die urartäische Töpferei aus Van und die Möglichkeiten ihrer Einordnung in die anatolische Keramik. I. „Orientalia", N. S. n. 21, մաս 3, 1952, էջ 310, տախտ. II—VI։



Տախտակ II

-մից»[21]։ Սովետական Հայաստանում, ինչպես տեսանք վերևում, նաև Արևմտյան Հայաստանում կատարվող պեղումները վկայում են, որ Ուրարտական պետության անկումից հետո շուտով վերականգնվեցին քաղաքները, ամրոցները և բնակավայրերը։ Կազմավորվող հայ ժողովուրդը ժառանգեց ու շարունակեց ուրարտական խեցեգործության զարգացած ավանդույթները, ուստի պատահական չէ վաղ հայկական և վաղ հելլենիստական խեցեղեն անոթների նմանությունը ուրարտականին։

Գառնիի թասի վերին մասը (տախտ. IV_3) ներսից ծածկված է մուգ կարմիր ներկով, արտաքուստ, կաթնավուն ֆոնի վրա, հիմքի մոտ կարմիրով պատկերված է զիգզագաձև զարդ։ Վերևում կարմիր գիծը երկու կողմից եզերված է շաղանակագույն գծերով։ Մակերևույթը լավ փայլեցրած է, թասի բեկորը հայտ է եկել պարսպի տակ, ներսում, հելլենիստական դամբարանների վերևից և թվագրվում է մ. թ. ա. IV—III դարերով։

Թասերի երրորդ խումբը զարդարված է փոսիկավոր և ուռուցիկ նախշերով և ընդօրինակված է մետաղյա անոթներից։ Ինքնատիպ հարդարանք ունեցող այդպիսի թասեր հայտնաբերվել են Արին-բերդում և Արմավիրում, որոնք պատրաստված են կաղապարի մեջ սեղմելու եղանակով։ Արին-բերդի թասերից մեկը պատրաստված է օխրայագույն կավից, երկու կողմից պատած է կարմիր անգոբով և լավ փայլեցված է (տախտ. II.), վերին մասը ներճկված է, կարճ։ Թասի ներսում պատկերված է ինը դդալաձև փոսիկ, որոնց մեջ տեղավորված են հատակից եկող տերևաձև զարդեր։ Գրեթե նույն ձևն ու զարդերն ունի Արին-բերդի մյուս թասը (տախտ. II_2)։ Վերոհիշյալ անոթներին որոշակի նմանություն ունեն Արմավիրում և Գառնիում գտնված բեկորները (Արմավիր, 1964 թ.

---

21 K. Emre, նշվ. աշխ., էջ 301։

№ 44, 1967 թ. № 45)։ Արմավիրի թասերի գդալաձև ելուստները դրսից շրջապատված են ավելի ցածր ու նեղ թմբով, որոնք, առանձին մասեր փայլեցված լինելու պատճառով, ավելի գրավիչ տեսք են ստացել (տախտ. II_{12})։ Գառնիի թասը պատրաստված է խոշորահատիկ թուխ կավից։ Իրանի և վերին մասի միջև շեշտված անցում ունի, ներսում, իրարից 1 սմ հեռավորությամբ, արված են գդալաձև փոսիկներ։ Համեմատաբար կոպիտ մշակում ունեցող այս թասը դրսից ու ներսից պատած է կարմիր անգոբով ու փայլեցրած է (տախտ. II_{11})։

Ուրարտական կենտրոններից՝ Թեյշեբաինիից, Թոփրախ-կալեից[22], Արմավիրից հայտնի են ուռուցիկ զարդերով մի շարք բրոնզյա թասեր։ Իր ուսումնասիրության մեջ Արին-բերդի տիպի անոթները Հ. Լուշեյը անվանում է «հակադիր գդալներով» թասեր, որոնց ամենավաղ օրինակները հանդիպում են մ. թ. ա. VII դարում Ասորեստանում[23] և Ուրարտուում[24]։ Այն լայն տարածում է ստանում հատկապես աքեմենյան շրջանում։ Աքեմենյան այդօրինակ թասեր են հայտնաբերվել բացի Իրանից ուրիշ վայրերում ևս, այդ թվում նաև այնպիսի հեռավոր շրջանում, ինչպիսին Ուրալն է։ Վրաստանում, Քսանիի կիրճում 1908 թ. գտնված արծաթյա թասը Արին-բերդի անոթների նման ունի ինը գդալաձև փոսիկ, որոնք ավելի կլորավուն են ծայրերում, վերջինս Հ. Լուշեյը համարում է այդ տիպի աքեմենյան թասերից ամենավաղը և թվագրում մ. թ. ա. VI դարի վերջով։ Այս խմբին են պատկանում Կանչայետիի արծաթյա և Ալգեթիի ապակյա թասը։ Կանչայետիի թասն ունի 16 ակոս, հատակին օղակով շրջանակված 31 ծաղկաթերթով վարդյակ, իսկ Ալգեթիի թասի գդալաձև փոսիկները 14 են (տր. 16 սմ)։ Երկուսն էլ պատկանում են մ. թ. ա. V դարի առաջին կեսին։ Նման թասեր հայտնաբերվել են նաև Պերսեպոլիսից, Առաջավոր Ասիայից՝ ապակյա, Դելֆից՝ բրոնզյա, թվագրվում է մոտ մ. թ. ա. 500 թ., Մազանդարանից՝ արծաթյա (մ. թ. ա. VI դարի վերջ), Սև ծովի հարավային ափերից (մ. թ. ա. V դարի կես) և Մերձուրալյան շրջաններից բրոնզյա, որոնցից Յուրյուզանիինը մ. թ. ա. V դարի է, իսկ Կամա գետի աջ ափին, Զուևի դամբարաններինը՝ մ. թ. ա. V—IV դարերի[25]։

Այդպիսի արծաթյա մի թաս էլ հայտնաբերվել է Հայաստանում՝ Նրգնկայի մոտ, որի գդալաձև թմբերը շրջանակված են սրտաձև զարդերով։ Դալտոնը այս համարում է մ. թ. ա. V դարի գործ, սակայն որոշ ուսումնասիրողներ, արձանագրություններ ունեցող մի շարք ղուգահեռների շնորհիվ, այդ տիպի թասերը համարում են մ. թ. ա. IV դարի արտադրանք[26]։

Արին-բերդի կավե թասերը իրենց ձևով ու հարդարանքով աղերսվում են ասորեստանյան և ուրարտական օրինակներին, ուստի ամենայն հավանականությամբ ընդօրինակվել են տեղում, ուրարտական մետաղյա թասերից և պատկանում են նույն ժամանակին[27]։ Այդ են վկայում ձևով, չափով ու գույներով նման, անզարդ, փված թասերը, որոնցից մեծ քանակությամբ հայտնաբերվել են ուրարտական կենտրոններում. սրանք հանդիսանում են ամենատարածված ձևերից մեկը։ Արմավիրի բեկորները կարող են վերաբերել ուրարտական ժամանակաշրջանի վերջին փուլին։ Իսկ Գառնիի վերոհիշյալ բեկորը, որը գտնվել է պալատական շենքի առջև 3 մ. խորությունից հիշեցնում է Խրտանոցի մ. թ. ա. VI դարի թասը[28] և կարող է պատկանել մ. թ. ա. V—IV դարերին։

---

[22] Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 18։ Գ. Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, էջ 160 և հտ.։ Г. А. Тирацян, К вопросу о торевтике и ювелирном деле Армении, „Историко-филологический журнал", № 1, 1969, էջ 103։

[23] H. Luschey, Die Phiale, Bleicherode am Harz, 1939, էջ 46 և հտ., նկ. 14—20։

[24] Գ. Ա. Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, էջ 161։

[25] Ю. М. Гагошидзе, Памятники раннеантичной эпохи из Ксанского ущелья, Тбилиси, 1964, էջ 96 և հտ., տախտ. XII—XIII։ E. F. Schmidt, Persepolis, II, Chicago, 1957, էջ 92, տախտ. 67_3; „Художественное стекло", Л., 1967, նկ. 3։ H. Luschey, նշվ. աշխ., էջ 43, 58—59, №№ 26, 27։ A. Pope, Survey of Persian Art, I, 1937, էջ 371, IV, տախտ. 120, A; H. Luschey, նշվ. աշխ., էջ 51։ P. Amandry, Argenterie Achéménide, Collection Hélène Stathatos, III, 1963, էջ 260, 263, նկ. 156, տախտ. XXXVII։ А. А. Иессен, Ранние связи Приуралья с Ираном, „Советская археология", XVI, 1952, էջ 211 և հտ., նկ. 3_3։

[26] Այդ մասին գրականությունը տե՛ս Г. А. Тирацян, К вопросу о торевтике и ювелирном деле Армении, էջ 101—102։

[27] С. Н. Ходжаш, նշվ. աշխ., էջ 136։ Г. А. Тирацян, К вопросу о торевтике..., էջ 103։

[28] А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, էջ 26, տախտ. IX_1։

Նույն ժամանակին է պատկանում նաև Գառնիում գտնված թուխ, գդալաձև զարդերով թասի հատակը։ Վերջինիս ակոսները կոպիտ են, վատ հղկված (տախտ. II_{1-6})։ Այն աղերսվում է Կարա-Թեփեի մ. թ. ա. V—IV դարերի սև կավանոթներից երկուսի[29] հետ։

Կավե թասերի մի խումբ զարդարված է ակոսավոր վարդյակներով, որոնք, ի տարբերություն նախորդների, դրսից չեն նշմարվում և արված են նախքան շորանալը, փորելու միջոցով։ Այդպիսի մի թաս հայտնաբերվել է Ջրառատի մ. թ. ա. V—IV դարերով թվագրվող դամբարանից[30], որի հատակին պատկերված է կոպիտ արված հնգաթև վարդյակ (տախտ. II_9)։ Նման մյուս թասերը հայտնաբերվել են Գառնիում։ Իր յուրօրինակ հարդարումով մյուսներից տարբերվում է թասերից մեկը (գտնվել է 7b քառ., 2,55 մ խորությունից)։ Բացի հատակի ակոսավոր վարդյակից, նրա վերին մասում երկու կողմից կարմիր ֆոնի վրա սևով արված է զիգզագաձև զարդ, դրսից վզի հիմքով անցնում է սև գոտի, մակերեսը լավ փայլեցրած է։ Թասը թվագրվում է մ. թ. ա. V—IV դարերով[31] (տախտ. IV_2)։ Այդպիսի ակոսավոր վարդյակ ունի նաև նույն տեղից հայտնաբերված մի ուրիշ թաս (2,90 սմ խոր.), որի կենտրոնը ներճկված է, մակերեսը լավ փայլեցված (տախտ. II_{13})։

Լեզվաձև զարդերով այս թասերը նույնպես իրենց նախատիպերն ունեն ուրարտական անոթների մեջ։ Այդպիսի զարդերով մետաղյա թասեր հայտնի են Թոփրախ-կալեից, Կարմիր-բլուրից[32], Արմավիրից (տախտ. II_4)։ Ուշագրավ է Արմավիրում գտնված բեկորը (տախտ. II_7), որն ունի ուրարտական կավանոթների նման ցածր, ներճկված վերին մաս։ Նրա հատակը զարդարված է զույգ-զույգ արված լեզվակներով (տր. 17 սմ)։ Վարդյակը կազմված է եղել մեկը մյուսից 1,5—2 սմ հեռավորության վրա գտնվող 10 զույգից։ Մակերեսը պատած է շագանակագույն անհավասար քսված անգորով։ Չևով ուրարտական այս բեկորը, միջնաբերդի պահեստային մեծ շենքում գտնված նույն կավը, մշակումն ու ձևն ունեցող թասերի օգնությամբ թվագրվում է մ. թ. ա. VII դարի վերջով և VI դարով, քանի որ պահեստային այս շենքում բացի ուրարտական և միջնադարյան խեցեղենից այլ շրջանի իրեր չեն գտնվել։

Նման լեզվաձև փորված ակոսներով անոթի մի բեկոր էլ հայտնաբերվել է Գառնիում (տախտ. II_8)։ Դարշնագույն նրբախեցի խոր թասի բեկորը դրսից ու ներսից փայլեցրած է։ Իրար մոտ անհամաչափ արված զարդերով անոթը ուրարտական վերոհիշյալ թասերի կոպիտ ընդօրինակությունն է և կարող է պատկանել մ. թ. ա. V—IV դարերին։

Գառնիի փորված վարդյակներով թասերը աղերսվում են Ջրառատի անոթի հետ և պատկանում են նույն ժամանակին։ Սակայն Գառնի ամրոցում պարսպի մոտ բացված մ. թ. ա. II—I դարերի դամբարաններից վերև գտնված վարդյակով թասի բեկորը (տախտ. II_0) վկայում է, որ այդօրինակ թասեր պատրաստվել են նաև հելլենիստական շրջանում։ Վերջինիս վարդյակը կոպիտ է պատրաստված, դրսից կարմրավուն է, ներսից շագանակագույն, մակերեսը փայլեցված է։ Գառնիից հայտնի են նաև, ջրամաններին հետ հայտնաբերված, հելլենիստական շրջանի այդպիսի գունազարդ վարդյակներով անոթների մի քանի բեկորներ (տախտ. IV_{-})։

Իր նախշերով վերոհիշյալ վարդյակներով անոթներից առանձնանում է Գառնիում հայտնաբերված թասերից մեկը (տր. 10 սմ, բարձ. 6 սմ)։ Թուխ կավից պատրաստված թասի ներսը (տախտ. II_{10}) զարդարված է փորագիր ծաղիկով։ Կրկնակի գծերով արված խաչաձև մեծ ծաղկաթերթիկների միջև պատկերված է նույնանման չորս ավելի փոքր թերթիկ, իսկ կենտրոնում թմբիկին փոխարինում է կրկնակի շրջանը (գտնվել է 4 մ խոր.)։ Այն իր ձևով, բարձր ուղղահայաց վերին մասով կապվում է Կարմիր-բլուրի և Ջրառատի վերոհիշյալ վաղ հայկական թասերի հետ և կարող է պատկանել նույն ժամանակին։

Թասեր-փիալաները գալիս են ուրարտական շրջանից և իրենց գոյությունը շարունակում են մինչև առաջին դարերը։ Նրանցից ակոսավոր ու ելուստավոր զարդերով թասերը հանդիսանում են մետաղյա անոթների ընդօրինակությունը, որը, ինչպես քննությունը ցույց տվեց, սկսվել է դեռևս ուրարտական շրջանում և շարունակվել է վաղ հայկական և հելլենիստական շրջանում։ Դա բացատրվում է նրանով, որ մետաղյա թասերը քիչ էին, թանկ. ուստի և անմատչելի բնակչության լայն խավերի համար։ Աքեմենյան շրջանում այդօրինակ թասերն այնքան ընդուն-

---

[29] О. Ш. Исмизаде, Раскопки холма Кара-Тепе в Мильской степи, „Материалы и исследования по Археологии СССР", 125, 1965, էջ 215 և հտ., նկ. $19_{1,2}$։

[30] А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Նշվ. աշխ., էջ 76 և հտ., տախտ. 4։

[31] Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении, էջ 276, տախտ. I_2։

[32] Б. Б. Пиотровский, Кармир-Блур, II, Ереван, 1952, տախտ. 18։ Գ. Ա. Տիրատյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, էջ 161։



Տախտակ III



Świętowity IV

ված են եղել, որ ընդօրինակվել են ոչ միայն կավով, այլև ապակիով։ Ուրարտական շրջանում ընդօրինակվել են նաև գնդաձև իրանով[33] և այլ տիպի անոթներ, ինչպես, օրինակ, Արմավիրում հայտնաբերված անոթներից երկուսը, որոնք հարդարված են Գառնիի և Արմավիրի վերոհիշյալ թասերի նման և նույն եղանակով։

Դրանցից մեկը ուրարտական, մեզ հայտնի, երկու կանթերի վերևում ելուստներով սափորն է (տախտ. II_3)։ Այն դարչնագույն է, գնդաձև իրանով, մակերեսը լավ փայլեցրած, վիզը իրանից անջատվում է ռելեֆ գոտիով, որից դեպի փորն են իջնում իրարից 1 սմ հեռավորությամբ ակոսներ (կանելյուր)։ Ջնայած սափորի ուռուցիկ մասը պակասում է, բայց ներքին մասի վրա ակոսների բացակայությունը ցույց է տալիս, որ նրանք հասել են մինչև կենտրոն (բարձ. 27,5 սմ, պատ. տր. 14 սմ, հատ. տր. 8,5 սմ)։ Սափորը գտնվել է միջնաբերդի պահեստային շենքում և ուրարտական է։

Մյուս բեկորը, որ գտնվել է պարսպից դուրս, հյուսիսային աշտարակների միջև, ուրարտական վարպետի նշաններով խեցեղենի հետ, պատրաստված է շագանակագույն կավից, մակերեսը պատած է կարմիր ներկով, որի վրա սեղմելու ու փայլի միջոցով արված է իրար հաջորդող լեզվաձև զարդ և նույնպես ուրարտական է (տախտ. II-)։ Նման զարդ ունեցող մ. թ. ա. VIII դ. մետաղյա մի անոթ հայտնաբերվել է Լուրիստանում, հայտնի է նաև կենդանատիպ երկկանթանի առևակոսներով ասորեստանյան և ուրարտական համարվող, մ. թ. ա. VII դարի արծաթյա մի սափոր։ Մետաղե ու կավե մ. թ. ա. VI—II դարերի սափորներ են գտնվել Իրանում, Փոքր Ասիայում և Ադրբեջանում[34]։ Հնարավոր է, որ վերջինների համար օրինակ հանդիսացած լինեն ուրարտական մետաղե և կավե սափորները։

Մինչև վերջերս աքեմենյան մետաղագործությունը, այդ թվում նաև թասերը, համարվում էին Ասորեստանի շարունակությունը, և կամ ուժեղ կերպով ենթարկվել են նրա ազդեցությանը։ Սակայն աքեմենյան ավանդույթների առաջացման գործում կարևոր դեր են խաղացել Լուրիստանի բրոնզյա առարկաները, դա վերաբերում է հատկապես կենդանիներ պատկերելու հատուկ ոճին[35]։ Վերջին տարիներին գիտնականների մի մասը հանգել է այն եզրակացության, թե աքեմենյան մշակույթը մեծ ազդեցություն է կրել նաև ուրարտական[36] արվեստից։ Ուրարտական մետաղագործական արտադրանքը մեծ հռչակ էր վայելում Հին Արևելքում, ուստի պատահական չէ նաև աքեմենյան մետաղյա առարկաների նմանությունն ուրարտականին։ Ասորեստանի, Ուրարտուի, Լուրիստանի և այդ տերիտորիայի մյուս ցեղերի մշակույթը զարգանում էր միմյանց հետ սերտ փոխհարաբերության պայմաններում, ուստի նրանք տեղական առանձնահատկություններից բացի ունեն շատ ընդհանրություններ։ Դեմ-հանդիման տեղադրված ելուստներով, լեզվաձև զարդերով թասեր կան ոչ միայն Ասորեստանում, այլև Ուրարտուում։ Ինչ վերաբերում է աքեմենյան շրջանում շատ տարածված տերևաձև զարդերով թասերին, ապա դրանք հանդիպում են միայն Ուրարտուում[37]։ Ուրարտական պետության կործանումից հետո Հայկական լեռնաշխարհում կյանքը չդադարեց։ Քաղաքներում, ամրոցներում ու բնակավայրերում շուտով այն նորմալացավ և ուրարտական շրջանի խեցեգործական կենտրոններն իրենց գործունեությունը շարունակեցին հայկական թագավորության և աքեմենյան տիրապետության ժամանակ[38]։

Հայաստանում, Վրաստանում, Սև ծովի հարավային ափերին կատարված աքեմենյան մետաղյա արտադրանքի գյուտերից ելնելով ենթադրում են, թե մետաղագործական կենտրոններից մեկը եղել է Հայկական լեռնաշխարհում[39]։ Այդ են վկայում նաև մետաղյա անոթներից կատարված կավե ընդօրինակությունները։ Կավե թասերի բազմազանությունը, որ նկատվում է Արմավիրում և Գառնիում, ոչ միայն աքեմենյան աշխարհի երկրների հետ ունեցած փոխազդեցության, այլև տեղական, ուրարտական ծագում խեցեգործության ավանդույթների կենսունակության արդյունք է։

---

[33] Б. Б. Пиотровский, Искусство Урарту, էջ 109; С. И. Ходжаш, նշվ. աշխ., էջ 136։

[34] W. Culican, The Medes and Persians, London, 1965. նկ. 3, 28, 47; P. Amandry, Argenterie Achéménide, Collection Helene Stathatos, III, 1963, էջ 262—266, 270—272, 160—161։ Նույնի Toreutique Achéménide, „Antike Kunst", 2, 1959, տախտ. 22։ С. М. Казиев, Из истории Кабалинского Магала, տախտ. X_{3-5}; Н. И. Рзаев, Художественная керамика Кавказской Албании, Баку, 1964, նկ. 10—15։

[35] W. Culican, նշվ. աշխ., էջ 29 և [illegible]

[36] Այդ մասին տե՛ս Գ. Ա. Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, էջ 149—163։

[37] Նույն տեղում, էջ 161։

[38] Գ. Ա. Տիրացյան, Հին հայկական պետության առաջացումը, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1966, էջ 95։

[39] H. Luschey, նշվ. աշխ., էջ 51, 56։

Պեղումները վկայում են, որ Արմավիրում, ուրարտացիների անկումից հետո, կյանքը չի ընդհատվել, իսկ հետագայում, իր դիրքի շնորհիվ ավելի բարգավաճելով, քաղաքը դարձել է հայկական թագավորների նստավայրերից մեկը։ Ուրարտական շենքերի մեծ մասը օգտագործվել է նաև վաղ հայկական և հելլենիստական շրջանում։ Արմավիրի միջնարերդի բլրի ռելեֆի, անընդհատ բնակության, բնական և այլ պատճառներով շերտերը խառնվել են, և դա դեռևս հնարավորություն չի տալիս պարզորոշ կերպով սահմանազատել վաղ հայկական և հելլենիստական հարուստ ու բազմազան խեցեղենը։

Գառնիում այդ շրջանների նյութական մշակույթի մնացորդները ներկայացված են գյուղի արևմտյան ծայրում, Մարտոյի բլուր կոչված վայրում բացված փոքրաթիվ աղքատ դամբարաններով, ամրոցի մոտ պարսպից դուրս և նրա տակ ներսում երկայնքով բացված (I տեղամաս) դամբարաններով և այդ մասի շերտերում ու պալատական շենքի առջև (III տեղամաս) բացված խոր հորերում հայտ եկած նյութերով։ Ամրոցում անընդմեջ կյանքի հետ կապված նորանոր շինությունների հետևանքով այդ շերտերը մեծ մասամբ ոչնչացվել կամ խառնվել են։

Նույնը կարելի է ասել III տեղամասում բացված հորերի պարունակության վերաբերյալ։ Այստեղից (76, в և 86 քառակուսիներ) մեծ քանակի տարբեր տեսակի գունազարդ և միագույն խեցեղեն է դուրս եկել, որոնց մեծ մասը անտարակույս հելլենիստական է, սակայն վերջինիս հետ միասին գտնված, մ. թ. ա. VII—IV դարերի տեղական (կանթեր և առանձին սև զարդերով) կավանոթների բեկորները դժվարացնում են վաղ հայկական և հելլենիստական խեցեղենը զատորոշելը, քանի որ վաղ հայկական խեցեղեն անոթների ձևերը շարունակվում են նաև հելլենիստական շրջանում։ Ամրոցի ներսում պարսպի տակ բացված մ. թ. ա. II—I դարերի սալարկղային և կարասային թաղումների մեջ հայտնաբերված իրերը հիմնականում զարդեր են, խեցեղենի սակավաթիվ գյուտերը գրեթե ոչնչով չեն օգնում վերոհիշյալ հարցերի պարզաբանմանը։ Ամրոցում գտնված գունազարդ խեցեղենը, որի մի քանի օրինակներ քննության առնվեցին այստեղ, գույներով ու զարդերով մասամբ տարբերվում են Արմավիրի գունազարդ խեցեղենից։ Հայաստանի գունազարդ խեցեղենը իր ձևերի, գույների ու զարդերի ընդհանրություններով հանդերձ, մեծ բազմազանություն է հանդես բերում, որովհետև ամեն կենտրոն ունի իր յուրահատկությունները։

Թ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

О НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКАХ БЕЛГОРОД-ДНЕСТРОВСКА

Белгород-Днестровск был, как известно, одним из наиболее ранних городов средневековой Молдавии с многочисленным армянским населением. Ранние свидетели материальной культуры армян города, упомянутые в ряде работ, относятся к середине XV в. Однако, по мнению Гр. Гойлава, есть свидетели более раннего периода, в частности X—XII вв.[1]

Поскольку до сих пор среди историков нет единого мнения относительно времени появления армян в этом городе, не будем затрагивать этот вопрос в данном исследовании.

В результате изучения материалов по истории армянской церкви в Белгород-Днестровске, архивных источников, содержания имеющихся в нынешней церкви плит выявились некоторые положения, связанные, в частности, с количеством церквей, временем их существования, происхождением и др., препятствующие четко представить картину развития армянской церкви в Белгород-Днестровске. Раскрытию этих положений и посвящена данная статья.

Самые древние сведения армянской церкви в Белгород-Днестровске дают основание предполагать, что она относится к XIV в. Этого мнения придерживается известный исследователь истории армян Молдавии и Румынии Х. Дж. Сируни, который, ссылаясь на сведения Г. Алишана, историка XIX в., указывает, что в 1384 г. католикос Теодорос назначил Ованеса епископом ар-

[1] См. Gr. Goilav. Bisericile armene din Tările Române. „Revista pentru istorie, arheologie şi filologie", Bucureşti, 1912, t. XII, № 1.